

Ar. A. IV. 1. 27  
A. 11 - 387

Ա. ՅԱԿՈՎՐԵԱՆ

# ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

ե՛ի

# ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԻՔԸ

A 25212

ԳՐԱՆԵՔ 3 ԿՈՊ.

1906  
ՔԻՅԷԼԻՍ



THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT



1954

# ՄԽԱՆՈՏԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

ԵՒ

## ԿԱԶՄԱԿԵՐՊԻԵ ԼՈՒ ԿԱՐԻՔԸ

Վաճառողների և սպառողների իսկական շահերի համար առևտրական թէօրիայի մէջ ամենաօգտաւէտ ձևը ընդունւած է «առաջին ձեռքից» գնելը կամ ծախելը: Բայց, ինչպէս երևում է, պրակտիկայի մէջ, երբ մի կողմը կազմակերպւած, պաշտպանւած չէ կապիտալիստական ընչաքաղցութիւնից, միշտ հարստահարւում է միւսից:

Ըստ երևոյթին գոհ լինելու է, որ ծխախոտագործները իրանց արտադրութիւնները ծախում են գործարանատէրերին. բայց սվ ականատես է լինում ամեն տարի գարնան՝ ծխախոտի յանձնումի և հաշիւ ստանալու խայտառակ ու սիրտ ծակող տեսարաններին, զրկւածների օգնութիւն հայցող ոչխարային աշքերին, չէ կարող առանց նեարդային դրութիւնը խանգարելու ապրել «Ռուսական Ռիվիէրայում»:

Գործարանատէրերից մանաւանդ մի քանիսը պլանտատօրների շուրջը վազուց հիւսել են մի այնպիսի վարչական ցանց, որին կարող են նախանձել շատ բիւրոկրատական պետութիւններ:

Վաճառականները ամենից առաջ շոկել, ընտրել են գիւղացիների միջից «ամենաընտրեալներին», այսինքն նրանց, որոնք կամ «խածան» են (ազդեցիկ) կամ մի քանի բուբլու համար ամեն սրբութիւն ծախող:

Գիւղական գործակատարները՝ բացառութեամբ շատ քչերի, ի նպաստ գնողների թէ՛ լրտես են, թէ՛ ճընշող, թէ՛ խաբող, և թէ՛ նրանց ազգութիւնը զգացնել տւող՝ մանաւանդ «միլիոնների» և «մեծ մարդկանց» շքեցնող պատմութիւններով: Գործակատարները անխոնջ պրօպագանդիստներ են: Նրանք տարին 12 ամիս, ամեն մի դէպքում, պլանտատօրների

առաջ գովում ու փառաբանում են իրանց «չօրբաջիներին» արած բարիքները աղքատներին, պատմում յանդուգն պլանտատորների կրած ֆլամաները, նաչալնիկների և դուցէ մինիստրների հրաժարեցումները և այդպիսով սարսափախառն հիացման մէջ պահում պլանտատորներին, որ սրանք չը դաւաճանեն «չօրբաջիներին», վաճառականներին:

Սեպտեմբերին՝ ծխախոտի տերևների հագիւ հաւաքւած «արաններում», գործարանատէրերի ներկայացուցիչները (մեծ մասամբ յոյներ) իրար հետ մրցելով՝ իրանց գործակատարները վոհմակով վազում են գիւղերը, խօսում են շատ քաղցրութեամբ պլանտատորների հետ և տալիս են ըստ ձր գնի՝ 10—11—12 ր. պուղին, և առաջարկում 300—500—800 ր. և աւելի կանխավճար, «զադատկա», լաւ համոզւած լինելով որ հայ պլանտատորը ճշտապահ պարտապան է:

«Ջադատկան» այն ցանցն է, որի մէջ իւրաքանչիւր աշնան բռնւում է պլանտատորը ստորագրելով հետևեալ պայմանագիրը.

Мы нижеподписались

Այդ բաւական չէ. երբ կանխավճարի մի մասը (100 կամ 200 ր.) տրւում է ոչ թէ սեպտեմբերին, այլ յունիսին, վաճառականը կազմում է նօտարով առանձին պայմանագիր, որով պլանտատորը պարտուորւում է ծխախոտը ուրիշին չը ծախել առանց նրա յօժ քրութիւնը առնելու, հակառակ պարագային կնթարկւում է պուղին 50 կօպ. կամ 1 րուբլի տուգանքի:

Պլանտատորը ոչ մի օրինական ոյժ չէ ունենում ձեռքին, ոչ իսկ մի թղթի կտոր, որ իր ծխախոտը այսքան գնով ծախւած է. այդ խայտառակ «պայմանագիրը» մնում է գնողի մօտ, որը գործ է ածում նրան իր բարի հայեցողութեան համեմատ, նայած՝ թէ իր շահերը թր յօղուածի վրայ յենվելով կարելի է առաջ տանել:

Գալիս է ծխախոտը վաճառականին նձնելու սեղօնը, կամ, ինչպէս գիւղացիները ասում են, «թէսլիւնը», (ապրիլ, մայիս ամիսներին), որ ժամանակ երևան է

դալիս Ֆիրմաների ներկայացուցիչների ամբողջ հրէշութիւնը:

Պլանտատօրը սուսական կշռքի մասին գաղափար չունի, իր հետ բերած է պապենական թրքական «դանթարը», որի վրայ հաշւած է թէ 13 օխա 100 դրամը անուժ է 1 պուդ: Աշուժ է խղճի մտօք և բերուժ, յանձնուժ վաճառականին:

Զօրբաջին սկսուժ է կշռել հակերը, նշանակել պուդերը վրան և արձանագրել իր խորհրդաւոր տետրակի մէջ. այդպէս իրար ետեւէ 20, 30, 40 հակ. ինքն ասուժ, ինքն արձանագրուժ է պուդերը: Մեղճ պլանտատօրը դողալով բերանը բաց ու խուփ է անուժ կշռքի լիզուակի հետ, անհամբեր սպասելով արդի. նքին: Զօրբաջին էլ վերջացնելով նոյն օրայ կշռելու աշխատանքը, հրաւիրուժ է պլանտատօրին իր—ձօռ հաշիւ տեսնելու:— Գիտե՛ս, սրջան եկաւ ծխախտը՝ 93 պուդ:

Պլանտատօրը կմկմալով պատասխանուժ է. — Զօրբաջի, կարելի է սխալութիւն կայ, իմ հաշուով 104 պուդ պէտք է լինի, հայդէ՛ն 4 պուդը սխալութիւն լինի իմ կողմից. 7 պուդը ռւր գնաց:

Զօրբաջին ստանուժ է պատուախնդիր մարդու արտայայտութիւն և նեղացած պոռուժ է գիւղացու երեսին, ծաղրուժ պանթարը, պլանտատօրի հաշուագիտութիւնը և ցոյց է տալիս իր «վաճառականի» դափդարը— «Ահա հաշիւը, քէֆդ սւր ուզէ, գնա»:

Ի՞նչ անէ գիւղացին, ձւժ դիմէ օդնութեան. ոչ լեզու գիտէ, ոչ օրէնք. եթէ պատահուժ են մի երկու ըմբոստներ, որ սկցիզնի չինովնիկ են բերուժ ստուգելու կշիռքը, լինուժ եժ «մասխարա» նոյնիսկ պլանտատօրների աչքին, որովհետեւ չինովնիկը ստուգուժ է միայն հակերի կշիռը, իսկ չօրաբաջին ամեն զգուշութիւն ձեռք է առած նախապէս. նա հակերի վրա գրուժ է ճիշտ կշիռքը, բայց գուժարման մէջ պակասեցնուժ է 10—12 պուդ, որը արժէ 400—120 բուբլի փող:

Կշիռքի գողութիւնով չէ վերջանուժ գործը. կայ ծխախտի տեսակները որոշելու հարցը:

Ծխախտի I, II, III տեսակները բարձր գնով ծախվուժ են, իսկ IV-ը 2 բուբլով կամ 2 1/2 բուբլով:

Կշռելու ժամանակ և որոշում են տեսակները: Չօրբաջին իր օգնականներով աշխատում է I, II-ից մի քանի հակ նշանակել տալ IV, որպէսզի 9—10 բուրլիանոց ապրանքը 2—2 $\frac{1}{2}$ -ի խեղդէ, և ինչ ասել կուզէ, որ այդտեղ էլ ինքը յաղթող է դուրս գալիս, 7—8 պուդ էլ չորրորդի կողմը նետելով, որ կանէ մօտաւորապէս 50 բուրլի:

Անագորոյն է չօրբաջին, երբ լսել է որ պլանտատօրը IV-ը տեսակը ծախել է ուրիշին 3 բուրլով կամ աւելի գնով: Նա կատաղած երկրորդը, երրորդը զօռով նշանակում է չորրորդ: Պլանտատօրը բողոքում է, բայց չօրբաջին անդրդուելի է. նա պոռում է, որ ինքը կարօտ չէ մնացել ծխախոտին, թող 500 բուրլի «գաղատկան» բերէ և ծխախոտը սրին ցանկանում է նրան ծախէ: Բայց գիւղացին սրտեղից գտնի 500 բ.. նրանից ոչ մի կոպէկ չէ մնացել. եթէ գտնի էլ, ո՞վ կառնի նրա «անպատիւ եղած» ծխախոտը, չէ որ այդ պարագային բոլորն էլ «իրար բերան չեն թքի»: Չկան էքսպէրտներ, որ ստուգեն տեսակները և վէճը վճռեն զրկածի օգտին:

Բայց այդ ևս բաւական չէ: Չօրբաջի ախորժակը շատ մեծ է: Նա վէճ էլ հանում է գնի մասին և փաստարանում, որ ինքը թէև 10 բուրլով է սակարկել, սակայն ծխախոտը լաւ պատրաստած չէ, ինքն այդ գնով երբէք չի կարող ընդունել. կամ 9 $\frac{1}{2}$ -ով պէտք է հաշուել և կամ 4 5 պուդ էլ բաղձի անել: Դրանից էլ մի 50 բուրլի պակասեցնում է, այնպէս որ մի պլանտատօրից ամեն տարի 200 բ. մտնում է աղայի գրպանը, որը շատ անգամ նոյնը չէ Ֆիրմայի հետ, որովհետև չօրբաջի—ներկայացուցիչը «խղճով» վաստակը պահում է իր օգտին:

Պլանտատօրներից նրանք՝ որոնք գիտակից են կամ ուժեղ՝ շատ քիչ են տուժում: Վնասուղիները անլեզու, անգէտներն են. դժբաղդարար 95 $\frac{0}{10}$  տոկոսը պլանտատօրների:

Չօրբաջիները իրանց սխրագործութիւնները ծածկում են դիպլօմատ ձևերով. կան այնպիսիները, որ 2 տարի լաւ են «թէսլիմ առնում», այսինքն տեսակի

խտիր չեն հանոււմ, իսկ երբորդ տարին եզորս դու պատուիրեցեր» պլուկոււմ են: Ումանք էլ, մի տարի միայն կշռելից գողանոււմ են, սիրով վարոււմ պլանտատորների հետ, հաշւից դուրս 5—10 բուրլի էլ բարախոււմ» աղքատ պլանտատորներին, յաջորդ տարին փոխոււմ քաղաքականութիւնը, համոզուած լինելով, որ գաղթականները Յորի համբերութիւն ունեն և զարմանալի մոռացկոտութիւն:

Այսպիսի ցանցերի մէջ բռնուած լինելով պլանտատորները, զարմանալի չէ, որ 90 օ/օ աղքատ են և մի տարի անբերրութեան չեն կարող դիմանալ, ինչպէս այդ ցոյց տուեց անցեալ 1904 տարին:

Աւ ծովի ափերոււմ գետեղւած են մօտ 4000 տուն պլանտատորներ, որոնք իրար վրա եթէ ոչ 200 բ., գէթ 75 բուրլի աւելորդ ֆնաւոււմ են ծխախոտի վաճառոււմից, ինչ որ անոււմ է տարեկան մի խոշոր գումար, մօտ 300,000 բուրլի, որը եթէ հող գնելու յատկացէր այսօր բոլորը իրանց փողով հողատէր կը լինէին:

Պլանտատորները մինչև այսօր ոչ մի ինքնապաշտպանութեան միջոցի չեն դիմել, շատ շատ աշխատել են նոր վաճառականներ գրաւել գէպի իրանց և մրցոււմ առաջ բերել, որը սակայն արմատական դարման լինել չէր կարող, որովհետև նորեկներն էլ կարենալ մրցելու համար կամայ ակամայ գործադրոււմ են նոյն միջոցները:

Պլանտատորներից ումանք՝ դրդելով հէնց իրար հակառակորդ չօրբաջիններից, սկսոււմ են խարդախութիւնների սնել, ծխախոտը փոխադրել դրացիի բարանը» և այրել իրանց արանները, կուլ տալու վաճառականի 7—800 բուրլին: Ումանք էլ միաժամանակ մի քանի Ֆիրմաներից վերցնոււմ են «գաղատկաներ» և յետոյ իրեն սնանկ վճարոււմ են 25—30 տոկոս:

Դա ինքնապաշտպանութեան վատ ձևն է, որին ընդունակ է դիմել ճարահատած, տղէտ մարդը միայն. բայց բարեբաղդաբար դա մեծ ծաւալ չի ստանոււմ և միայն գործադրոււմ է Սուխոււմի շրջանոււմ: Սօջին ու Ազլէրը կարող են պարծենալ իրանց ճշտապահութեամբ,

այնքան սակաւաթիւ են և ամենին յայտնի, միամիտ ձևացող «գօլանդերը ջիհները» (խարբբայ) :

Եթէ այս անարդար կարգերը շարունակւեն, նրանց հետևանքով պլանտատորները պէտք է այլասեուեն, փոխադարձ վստահութիւնը պէտք է վերանայ և դնող ու ծախող շատ դժուարութիւնների պէտք է հանդիպեն :

Ժամանակ է, որ Սև ծովի պլանտատորները կազմակերպւեն տնտեսական հողի վրա և ազնիւ կերպով ինքնապաշտպանութեան դիմելով, իրանց արիւն-քրտինքի բաժինը չը կերցնեն հասարիկ չօրքաջիներին :

Ժամանակ է կազմակերպւելու, որովհետև ժամանակակից հոսանքը եկել ավէ է առել պլանտացիաներին էլ : Այնտեղ աշխատող բանւորներն ես ենթարկւելով ընդհանուր գիտակցական զարթնումին, մարդավայել աշխատանք ու բարձր վարձատրութիւն են պահանջում : Այս տարի նշանները երևացին : Առաջիկայ տարի աւելի սուր կերպարանք է ստանալու հարցը, ծխախոտը թանգ կը նստի պլանտատորներին : Մինչդեռ ծխախոտի արժէքը ոչ թէ բարձրանում է, այլ իջնում, շնորհիւ մի քանի ֆիրմաների համաձայնութեան : Կարծես այդքան հարստահարութիւնը բաւական չէր :

Ժամանակ է թանգ ծախելու ծխախոտը, ոչ թէ միայն բանւորի օրականը բարձրանալու, այլ կենսական մըթերքների գները աւելանալու պատճառով : Չաքարը, կերօսինը, լուցկին, հագուստեղէնը անդադար բարձրանում են, մանաւանդ մեզանում : միւս կողմից դեսեատինի արեւդը 25—30 բուրլի է հասնում :

Սև ծովի ավի պլանտատորները ունեն մի առաւելութիւն, որից դուրկ են կուրբանեան շրջանի պլանտատորները : Մեր ծխախոտը այնպիսի համ ու հոտ ունի, որ գործարանները այդպիսի ապրանք Ռուսաստանի ոչ մի անկիւնում չեն գտնի և եթէ յամաւեն չհ գնելու կազմակերպւած պլանտատորներից, պէտք է ստիպւած լինեն Թիւրքիայից բերել տալ, վճարելով կրկին արժէքը : ուրեմն ինչո՞ւ չը կազմակերպւել, չը միանալ, երբ յաջողութեան շանսեր կան :

Որովհետև մրցումը ուժեղների հետ, առանց կազմակերպւելու աջողութեամբ առաջ տանել անկարելի

է, ուստի հարկաւոր է նախ պաշտպանելու միջոցները պատրաստել և այնպէս հրապարակ դուրս գալ, որպէս զի զործը չը վիժէ:

Այդ նպատակով առաջարկում եմ հետեւեալ ծրագիրը գիւղական ուսուցիչներին և հասկացող երիտասարդութեան:

1) Իւրաքանչիւր գիւղում կազմել խորհրդակցական ժողով և ընտրել 1 կամ 2 հոգի ներկայացուցիչ: Ներկայացուցիչներ կարող են տալ Սուխումը, Աղլէրը, Սօջին ու Տուապսէն 40 հոգու չափ:

2) Պլանտատորների ներկայացուցիչները կը կազմեն ընդհանուր ժողով և կընտրեն 9 հոգուց բաղկացած մի կենտրոնական Մարմին:

3) Կենտրոնական վարչական Մարմինը կը կառավարէ ամբողջ շրջանի գործերը, օգնական ունենալով իւրաքանչիւր շրջանում ընտրւած (գիւղական ժողովրդից) 5 հոգուց բաղկացած յանձնաժողովներ:

4) Իւրաքանչիւր առանձին շրջան կունենայ և իր երգուեալ էքսպէրտները, որոնք կը վճռեն տեսակի վերաբերեալ վէճերը:

5) Տեղական մարմինները «զադատկայից» առաջ կայցելին բոլոր պլանտացիաները, կը քննեն բերքի քանակութիւնը տեսակը և կորոշեն ծախու գինը:

6) Մի անգամ գների ցուցակը պատրաստելուց յետոյ, կառաջարկելի գնող Ֆիրմաներին գնալ ման գալ պլանտացիաները, իսկ առուծախի գործողութիւնը կատարել վարչական կենտրոնական Մարմնի հետ:

Մացօր. Այդպիսի կենտրոնացում անհրաժեշտ է շրջանների շահերը պաշտպանելու համար:

7) Ֆօնդի համար իւրաքանչիւր պլանտատորից ստանալ 50 բուրլի բաժնեգին: Եթէ 4000-ից 2000-ը մասնակցեն առաջին անգամ, 100 հազար բուրլու մի խոշոր գումար դուրս կը գայ:

8) Այդ 100 հազարի ֆօնդը, ի հարկին օգնութեան կը հասնի ամենակարօտ պլանտատորներին, պահեստներ կը հիմնէ կամ նոյնիսկ գործարաններ կը բանայ:

Կրկնում եմ, տեղական ֆիրմաները եթէ բոյկոտ

սկսեն, նրանք չեն կարող այդ շարունակել 1 տարուց աւելի, որովհետև Սև ծովի ծխախոտը անհրաժեշտ է գործարանների համար: Բացի այդ, շատ հեռու Ֆիրմաներ անձանօթ տեղական պայմաններին ու մարդկանց, վախենում են գալ «պաղատկա» բաժանելու և ստիպւած իրանք աւելի թանգ գնով վերցնում են ձանօթ Ֆիրմաներից (որոնք եթէ իրանց գործարաններում սպառում են տարեկան 50 հազար պուդ, գնում են 150 հազար): Եթէ պլանտատորները քաղաքներում ունենան իրանց պահեստները, ոչ թէ միայն Ռուսաստանի, այլ և արտասահմանեան Ֆիրմաներ կարող են գրաւել դէպի իրանց: (Черноморск. поб. լրագրի այս տարւայ օգ. 23 թ. համարում բելգիական մի Ֆիրմա «Maison Iphandi» խնդրում էր ծխախոտի պահեստների հասցէներ):

Իմ ծրագիր-առաջ արկը ի հարկէ կարօտ է լուրջ մշակման, բայց անիրագործելի չէ: Պլանտատորները սաստիկ տրամադրւած են թօթափելու չօրբաջիների լուծը: Մի տարի միայն հարկաւոր է եռանդուն աշխատանք. գործը մի անգամ սկիզբ առնելուց յետոյ ինքնին առաջ կերթայ:

Սուխոււմցիներից մանաւանդ խնդրում եմ լուրջ ուշադրութեան առնել այս առաջարկը և հէնց այժմեանից նախապատրաստական ժողով ունենալ, որի տեղի և ժամանակի որոշման համար մտնել ինձ հետ յարաբերութեան:

Արամ Յակոբե սն

1905 հոկտ. 3 Սօչի

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԳ ԵՒՍ

Մասամբ քաղաքական անապահով պայմանների պատճառով, մասամբ էլ գիւղացիներին պատժելու նպատակով զանազան խարդախութիւնների համար, 1905-ի աշնան Սուխումի շրջանում ծխախոտի ֆիրմաները, բացի Մեսաքսուդից «զազատկա»-ի ցանցը աւելորդ համարեցին գործադրութեան դնելու և ձրագրեցին կրիզիսի ենթարկելով պլանտատորներին, խեղդել նրանց «զորս դու պատուիրեցեր», և ի՞նչ ասել կուզէ, որ փառաւորապէս յաջողեցան:

Պլանտատորները, միշտ սովորած լինելով աշնան մեծաքանակ զազատկա ստանալու, լայն գործ բռնած էին և իրանց պարտքերի վճարումները պայմանաւորւած էին աշնան:

Եկաւ սեղօնը, բայց «զազատկա» չըկար, բոլորը ընկճւեցին և ստիպւեցին ահագին տոկոսներով փոխառութիւններ կնքել՝ մի կերպ շունչ քաշելու համար, յոյս ունենալով՝ որ գարնան «թէսլիմը» կազատի իրանց: Բայց գարունն էլ չըժպտաց նրանց. մի կարգ հրէայ մանր վաճառականներ և ֆաբրիկանտներ անկարող եղան այս տարի հրապարակ ելնել, և ստպարէզը մնաց Լաֆէրմ, Բօզդանով, Ստամպօլի, Մեսաքսուդի և այլ խոշոր ֆիրմաների, որոնք սկսեցին ամենացածր, սլանիչ գներ առաջարկել: Ի՞նչ կարող էին անել չըկազմակերպւած, պարտքերի տակ ճնշւած պլանտատորները. քիչ դիմանալուց յետոյ, չըկարողացան տոկալ և հեղեղի նման ծխախոտը թափուց շուկայ:

Գնողների օրը բացւած էր. 7 ռ. արժող IV տեսակի ծխախոտը 1 ռ.-ով, 15 ռ. արժողը 7 ռ., այն էլ նազոճնուզով սկսեցին ամբարել ու ամբարել և արնքն այն եղաւ, որ շատ պլանտատորներ ի-դաւոյնչ

ցան, թողին ու փախան, իսկ մեծամասնութիւնը 10—20 տարւայ աշխատանքը վրայ տւաւ, այսինքն թոյլ տւաւ, որ իր դառն քրտինքով շահածը մի քանի ֆիրմաներ փառաւորապէս, օր ցերեկով, կուլ տան: Մինչդեռ եթէ գիւղացիները կազմակերպւած, Ֆօնդ ստեղծած լինէին, կապիտալիստների մտքովն անպամ չէր անցնի այդպիսի խաղեր խաղալ:

Այդ մանեօվըը շատ դուր եկաւ վաճառականներին և հաւանական է, որ 3—4 տարին մի անգամ կրկնեն, մանաւանդ առիթները, պատրւակները չեն, որ պիտի պակասեն Ռուսաստանի խրոնիքական դարձած յեղափոխութեան շրջանում:

Ուրեմն պլանտատորներին, բացի կեղեքումից, սպառնում են այս տարւանի նման «արմատական» պոլիտէմներ, և դա աւելի հարկադրում է պլանտատորներին ինքնապաշտպանութեան դիմել՝ կազմակերպւելով:

Եւսխոտադործների Միութիւնը անհրաժեշտ է նաև սևծովեան բազմութիւ հայ գիւղացիութեան գոյութեան, ապագայի համար:

Բացի Մծարայի 118 տուն ռուսահպատակներից և Ծերելդայի մի քանի տասնեակ հողատէր պլանտատորներից, մնացած գիւղացիութիւնը անհող թափառում է կալւածքից կալւածք, անտառից անտառ, նոր պլանտացիաներ սարքում և մշակելի հողեր առաջ բերում, հարստացնելով բացի ֆարրիկանտներից, նաև կալւածատէրերին: Կանցնեն մի քանի տարի ևս, այլ ևս անտառներ չեն մնայ, այժմեան հողերը ուժասպառ կը լինեն, և մեր պլանտատորները չը դիմանալով արենդի բարձրացրած գներին՝ կը սկսեն թափառել Հիւսիսային Կովկաս, Ղրիմ և այլն, նոր «վայրենի» հողեր գտնելու և իրանց թշւառ կեանքը մի կերպ քարշ տալու:

Այս տխուր ապագան ամենատգէտ պլանտատորն անգամ պատկերացնում է, գիտակցում է, բայց, լինելով սաստիկ անհատական ու պահպանողական, չէ կարողանում հին հասկացողութիւններից, վաճառումի հին ձևերից դուրս թռչել և կանգնել փրկարար ուղու վրայ:

Իմ ունեցած մասնաւոր խօսակցութիւններէ ընթացքում, նոյն իսկ ժողովներէ մէջ, բոլոր պլանտատորները համաձայնութիւն էին, յայտնում որ եթէ կազմակերպուի կարողանային իրանց ծխախոտի պուղը 2—3 բուրլի աւելի ծախել, սիրայօժար ամեն մի պուղից 50 կոպէկ կը առային Վիրանց ֆօնդին և այլ կարիքների համար: Ընդունելով՝ որ միայն հայերը 300,000 պուղ են արդիւնաբերում (Յոյներին էլ կարելի է միացնել), տարեկան 150,000 բուրլու հասոյթ կը կենտրոնանայ պլանտատորների կեդրոնական Վարչական մարմնի ձեռքում, որը նաւթարդիւնաբերողների խորհրդի նըման կը կարգադրէ գիւղական ուսումնարանական, առողջարանական և տնտեսական բոլոր գործերը:

150 հազար բ. մօտաւորապէս կարելի է այսպէս բաշխել, աւելի շօշափելի դարձնելու համար նրա կատարելիք գերը.

Բարձրագոյն կրթութիւն ստացած զիրեկտորի, վարչական մարմնի, էկսպերտների տարեկան վարձատրութիւն . . . . .	15,000
Բժիշկների, ֆէլդշէրների, մանկաբարձուհիների և այլն . . . . .	30,000
Դպրոցների . . . . .	45,000
	<hr/>
	90,000

Ուրեմն կաւելանայ մօտաւորապէս 60,000, որը յաջողութեամբ կարելի է հողային գնումների յատկացնել և հետզհետէ հողատէր դարձնել պլանտատորներին: Մեր Սև ծովի ափը կլիմայական հրաշալի յատկութիւններ ունի գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերի համար. 20—30 տարի արիւն քրտինք թափելուց և շէնցնելուց յետոյ ափսոս է, յիմարութիւն է տեղի տալ, թողնել հեռանալ և նոր բաղդ փնտռել անծանօթ վայրերում: Ուստի հարկաւոր է հողատէր դառնալու միջոցներ ձեռք առնել, իսկ այդ միջոցը կը տայ մեզ ուսահպատակ լինելու հետ միայն կազմակերպւելը և ընդհանուր ֆօնդ ստեղծելը:

Մեր գիւղերից բազմամարդները մի կերպ ուսումնարան պահում են. ժողովրդի մեծամասնութիւնը սակայն, բաժանւած ժանր գիւղերի, խարխափում տը-

[104.]

A <sup>11</sup> 25212

գիտութեան մէջ և անժամանակ մնում՝ լուսատուութեան բարիքներից. հարկաւոր է ուսումնասիրանների ցանցը տարածել ամենամութ անկիւններում անգամ Բայց մի կարող է այդ անել, եթէ միայն ծխախոտագործների միութիւնը,

Մեր գաղթականութիւնը ճախճախոտ կալածքներում, վատ բնակարանների մէջ, սոսկալի սննդով և անչափ աշխատանքով ուժասպար է լինում, քայքայուում այլասերում, և հազարաւոր զոհեր տալիս՝ ամենահասարակ հիւանդութիւններին: Հարկաւոր է բարեփոխել ապրուստի ձևերը, անհրաժեշտ է հանդիստ տալ յոգնած բազուկներին, մարդավայել կեանք տալ կանանց և փրկել նրանց գրեթէ կոտորածի կերպարանք ստացած կանացի հիւանդութիւններից: Խնշը ընդունակ կը լինի անելու այդ, եթէ ոչ միայն և միմիայն իրանց կազմակերպուած տնտեսական հողի վրայ:

Այդ կազմակերպուածից կախում ունի իրանց հողատէր դառնալը, զարգանալը, առողջութիւնը, բարեկեցութիւնը, մի խօսքով ամբողջ գոյութիւնը: Մինչդեռ ներկայ վաճառուածի ձևերը պահելով՝ ոչ մի լաւ բանի յոյս չըկայ և սպասում է նրանց սովածութիւն, այլասերում, քայքայում և թափառական կեանք:

Գիտեմ, շատ խոչընդոտներ կան. շատ դժուար է մեր գիւղացիներին համոզել միացնել, մանաւանդ Սուխումի 1902 թ. սպառողական ընկերութեան անյաջող փորձից յետոյ, բայց քանի որ կազմակերպւելուց միայն կախում ունի 20,000 ժողովրդի գոյութիւնը, սպազան, պէտք է անհրաժեշտօրէն, խանդավառ յոյսով, անխափան հաւատով դիմել դէպի առաջադրւած նպատակը և իրագործել այն: Որքան շուտ այնքան լաւ:

Ա.Յ.

Օգոստոս 1906 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԱԿՏՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220025212

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT



1954

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT



1954